# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 օգոստոսի 2021 թվականի N 324 Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ, ՄԵՂՐԻ, ՏԱԹԵՎ ԵՎ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 2-րդ, 2.2-րդ մասերի, 122.1-ին հոդվածի 2-րդ մասի և 127-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N195-Ա որոշման 1-ին կետի և հիմք ընդունելով Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Տաթև և Տեղ համայնքներում ընտրողների թվի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Տաթև և Տեղ բազմաբնակավայր համայնքներում 2021 թվականի հոկտեմբերի 17-ին նշանակել համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ:

8/12/2021

X

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

Подписано: BABAYAN NAREK 1505920434

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** /Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 12

Ք. Կապան